



## ԳՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԵՏ

Պատիվ և հաճույք մըն է ինձ համար համառոտաբար խոսիլ Գարեգին արքեպիսկոպոսի բազմակողմանի աշխատութեան մեկ տեսակին մասին և ցույց տալ անհուն ծառայութիւնը որ մատուցած է իբր Հայ մանրանկարչութեան մասնագետ:

Հայ անցյալի և մշակույթի լուսարանութեան համար նկարագրող մատյանները ինչտ կարևոր դեր մը կը խաղան: Պատերազմներու, արշտանքներու և կրոնական հարձանքներու զոհ դացած են մեր եկեղեցիներն և վանքերն շատերը, այնպես որ հաճախ ավերակներ կամ կիսավրայտակ շինվածքներ միակ վիճակներն են Հայ ճարտարապետական բարձր արվեստին: Չկան այլևս շքեղ արծաթյա, ոսկեզօծ և ակաշակուռ անոթները, կտավները, որոնք եկեղեցիներու զարդը կը կազմէին: Բայց հակառակ այլերումներուն և կողոպուտներուն, մեծ թվով ձեռագիրներ բարեբախտաբար կը մնան տակալին, և կարելի է հասակ դաղափար մը կարծել Հայ նկարչութեան զարգացման մասին: Կարելի է որոշել Հայաստանի և Կիլիկիո արվեստի զանազան հոսանքները, հետեւել Հայ գրիչներու գործողութեան բոլոր այն կենտրոններուն մեջ, ուր հայկական անկախութեան կործանումն լիբրջ նոր գաղութներ հաստատվեցան:

Այս ստեղծագործութեան ծանոթութիւնը կը պարտինք մեծամի մասամբ Գարեգին Սրբազանին, որ յուր երկարատև և անխնջ գործունեութեան ընթացքին մտտին քննած է Էջմիածնի, Նրուսաղիտի, Վենիսի և Վիեննայի ճոխ հավաքածոները, ինչպես նաև Միտրոպոլի և Ամերիկայի մա-

տենադարաններու կամ թանգարաններու մեջ դնուող Հայ մատյանները: Հայաստանի զանազան դասառները ճամբորդելով տեսած է բոլոր այն ձեռագիրները, որոնք նախորդ պատերազմին առաջ կը պահվէին վանքերու կամ եկեղեցիներու մեջ: Ուսումնասիրած է դանոնք իբր հմուտ դեղարվեստագետ, որ ծանոթ է ոչ միայն Հայ անցյալին, այլ և մոտակա երկիրներուն արվեստին, ինչպես Բյուզանդական, Սլովակական, Սասանյան և Սելճուքեան արվեստները և ուսումնասիրած է դանոնք իբր պատմագետ, ցույց տալով Հիշատակարաններու մեջ դնուող շահեկան տեղեկութիւնները և անոնց նշանակութիւնը եկեղեցական կամ քաղաքական պատմութեան համար: Ուսումնասիրած է վերջապես իբր զգայուն դեղարվեստագետ, որ գիտե՞ դասատու և գնահատել տալ մեր գրիչներու և ծաղկողներու արվեստին մասնավոր հմայքը:

Վարդապետութեան սուսընն տարիներն սկսյալ իբր ուշագրութեան առարկա եղան նկարագրող ձեռագիրները: 1898 թվին Արարատ ամսագրին մեջ կը հրատարակեր ուսումնասիրութիւն մը Ախալցխայի գաղափարի Մղղութի ղրուղի Ավետարանի մասին: Այս ձեռագիրը գրված և ծաղկված է 909 թվին, ի Կ. Պոլսո, ուշագրալ է իբր Հայ մանրանկարչութեան ամենահին օրինակներին մին: Կարելիք է նաև իբր ապացուց, որ աստեղծողը դարու սկիզբը Հայ արվեստագետներ կաշխատան Բյուզանդական Կաթողիկոսական մայրաքաղաքին մեջ:

Մանրանկարչութեան նվիրված իր երկրորդ հոդվածը՝ «Նախնեաց յիշատակները» կը պարունակէ զպատմական և գե-

դարձեալստեան խիստ շահեկան ծանօթություններ: Այս ամօրով Գարեգին Սրբազանը մանրամասնորոշանկարպղբած և ուսուցաստիրած է էջմիածնի թիով 369 աղետարանը, զբոված և նկարազարդված է Սեբաստիա 1068 թվին, Կրեկոզը Արեուցու կողմանէ, որ էր հօր և եղբոր հետ միասին հետեած էր վասպուրակոսնի Սենիգեթիմ թաղավորին: Գարեգին Սրբազանի ուսումնասիրութեան շնորհիվ կը տեսնենք, որ հայրենի հողին հետու իսկ Հայ արվեստը կը պահեր իր բնորոշ հանդամանքը, օգտվելով հանդերձ Բյուզանդական օրինակներէ: Կը տեսնենք այն նուրբ ոճը, որ սկսած էր զարգանալ Հայաստանի մեջ տասներևհերրորդ դարուն, և որ նասապատիկերն է այն արվեստին, որ պիտի ծաղկէ Կիլիկիո մեջ հետևյալ երկու դարերու ընթացքին:

Այս վերջի աստը ասրիներուն մեջ Գարեգին Սրբազան մասնավորապես զբաղված է տասներեքերորդ դարու ստեղծագործութեամբ, որ մեր մանրանկարչական արվեստի ոսկեդարը կը նախ նկատվի, նամասնալանդ Կիլիկիո մեջ: Եթե միայն արջաներու և իշխաններու հովանավորութեան տակ, դիտնական և դեղարվեստասեր կաթողիկոսներու և եպիսկոպոսներու հոգածութեամբ մանրանկարչությունը նոր փայլ կը ստանայ այս շրջանին: Սկիզբա, Գրադարի, Հումկլա և Սիս ստաջնակարգ կենտրոններ են, ուր հանճարեղ զբիչներ և նրկարիչներ կը շարատեսին զով զով ու կը պատրաստեն շքեղ մատաններ, սրոնք դըլուխ դործոցներ են ոչ միայն Հայ արվեստի, այլ և ընդհանուր Միջնադարյան արվեստի: Քրոստանդին Ա. կաթողիկոս սրպես Հայ մանրանկարչութեան մեծ հովանավորը հողվածը Գարեգին Սրբազան մեղ կը ծանոթացնեն ըրոր այն մատանները, որոնք կապոված են Կոստանդին կաթողիկոսի անվան հետ, և կը պարկերացնեն Հումկլայի զբիչներու բարձր արվեստը, մասնալանդ Թորոս Ռոսլինինը, որ արդարոցին փառքն էր:

Տասներեքերորդ դարու Հայաստանի

զբիչներու դործունեությունը նույնքան ուշադրով է: Իր պատմահնազոյտական աշխատութեան մեջ, «Սագրակնանք կամ Պոռչկանք Հայոց պատմութեան մեջ», Գարեգին Սրբազան ցույց կուտայ, որ Ալեքսանդրեան տիրապետութենէն հետո, Վրահայիական իշխանութեան շրջանին, իսկական վարածունեղ մը կը սկսէ Հայաստանի արեւլայն դավաններուն մեջ: Այս շնորհաձակ աշխատութեան երկրորդ մասը, որ տակալին մեր ձեռքը չէ հասած—նվիրված է քաղաքակրթական և հոգեվոյր կյանքի նկարագրութեան: Մանրանկարչութեան ուսումնասիրութեան համար մասնավոր կարեւորություն ունի վերջի դըլուխը, «ԳլԱՁՈՐԻ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՅԸ ԿԱՄ ՀԱՍՏԱԼՍԱՐԱՆԱՆԸ», որովհետեւ հոս աշխատեցան ճարտար զբիչներ, ինչպես Թորոս Տարոնեցին:

Հայկական արեւլայն դավաններու վերածնունդի պատմությունը Գարեգին Սրբազանը ուսումնասիրած է նաև կարգ մը հողվածներու մեջ: Քրոստանդոս Մանրանկարիչ և Շոթրոկնայ Տոհմը, զարձակ Իգնատիոս Հոռոմոսի մանրանկարչի մասին» հողվածները կը պատկերացնեն այս վարպետին արվեստը, անոր արեւլայն բնութեւր, դեղարվեստական կապերը Սասանյան, Միջագետյան և արաբական արվաններու հետ, զմասնություններ հին սյուրիական պատկերադրութեան հետ: Այս արեւլայն բնութեւր, որ Հայաստանի մանրանկարչությունը կը զանադանէ Կիլիկյան ստեղծագործություններին, երևան կուզայ ուրիշ ձեռագրիներու մեջ: Այս շարքին են թարգմանաց Ալեոտարանը, որու մասին Գարեգին Սրբազան արդեն խոսած էր նախնեցի հիշատակներուն մեջ, Գետաշինի Ալեոտարանը, ուսումնասիրված Հաղբառի դպրոցի մի դըլուխ դործոց վերնադրով հողվածին մեջ և ամեոարան մը, մասամբ նկարված Արաս դըլի կողմանէ, սր սոյմ կը դոնվի Երեքադրի Համալսարանը:

Այս համառոտ տեսությունը հողիվ զաղապար մը կընայ տալ Գարեգին Սրբազանի բաղմարդյուն դործի մասին: Պետք

է նաև հիշել Գրչութեան արվեստը հին հայոց մեջ, թանկագին քարտեղ մը Հայ հնագրութեան համար, ինչպես նաև դրսևութեան արվեստը և երկասիրութեան արվեստը, որոնք թեև մանրանկարչութեան արվեստի շին հատկացված, սակայն շահեկան տեղեկութիւններ կը պարունակեն շատ մը ձևագիրներու մասին: Այս կարգին է, օրինակի համար, Հայկոյց թառի Ամենափրկիչը, ուր քանդակագործութեան նմուշներու հետ միասին ուսումնասիրված են խաչիւթիւթի պատկերներ, քաղված դանազան նկարագրող Ամենարաններ:

Հայ արվեստի բոլոր ուսանողները երախտագիտութեան խոր պարտք մը ու-

նին Գարեգին Սրբազանի հանդեպ: Շնորհիվ էր հրատարակութիւններուն, ան եղած է երեց առաջնորդը և ոգևորած է գանոնք, և էր աննման բարյացակամութեամբ օգնած է անոնց ամեն անգամ, որ գլխած են իրեն: Ոչ մեկ ղրտնական, ըլլայ Հայ կամ օտար, չունի Գարեգին Սրբազանի խոր հմտութիւնը, ոչ մեկը այդ քան ծառայութիւն մատուցած է Հայ մանրանկարչութեան զիտութեան: Մեր սրտաբուղիս իղձն է, որ Մանրանկարչական բարտեղը այն հսկա աշխատանքը որ պատրաստ է երկար տարիներ թվեր, փութով երևան դա, կազմելով փայլուն պատկեր էր առատ գործունեութեան:

(«Հայաստանյայց եկեղեցի»)

ՍԵՐԱԲՓԻ ՏԵՐՆԵՐՍԻՍԵԱՆ

